



## ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

(Մենքան 80-ամյա հոբելյանի առքիվ)

 բացական հայ մեծանում բանաստեղծ Ավետիք Խսահակյանի ծննդյան 80-ամյակը:

Հայ իրականության մեջ ոչ մի գորդ իր կենդանության օրոք չի արժանացել համաժողովրդական այնպիսի սիրութեա փառքի, ինչպես Ավետիք Խսահակյանը: Մեծ թե փոքր, կին թե տղամարդ, գիտնական թե շինական, բանվոր թե մատավորական, աշակերտ թե ուսանող՝ բոլորը ճանաշում են նրան գեմքով, գիտեն անձամբ և ուր էլ հանդիպելիս լինեն, խորին ակնածանքով ողջունում են իրենց սիրելի բանաստեղծին, հարգանք մատուցում նրան:

Վարպետ... այսպես է կոչում նրան հայ ժողովուրդը: Հոգեթով խոսքի, խորունկ մըստրերի, շարժաղ երգերի աննման վարպետ: Երգեր, որոնք հյուսվել են ժողովրդի սրտից, ժողովրդի համար՝ հայկական բնաշխարհի երփներանդ գուշներով:

Ավետիք Խսահակյանի գրական ավելի քան 60-ամյա գործունեությունը սերտորեն կապված է եղել հարազատ ժողովովի կլանքի, նրա պատմության վերջին, հուղումնակից շրջանի հետ: Նա անսահման սիրով երգել է Հայրենի երկրը, նրա շքնաղ բնությունը, Արագածի մանիները, Շիրակի ծփոն արտերը, շինականի կյանքը: Նա տեսել ու խորապես վերապրել է հարազատ ժողովրդի անցալի թշվառությունն ու զրկանքը և դառնորեն երգել՝

«Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ,  
Օր ու արե շտեսանք...»:

Դրա հետ միասին բանաստեղծի ըմբուստ ոգին չի կամեցել հաշտվել այդ թշվառության հետ և նա պայքարի է կուել ժողովրդին՝ հնչեցնելով ազատության զանգը, հանուն երջանիկ կյանքի, հանուն ժողովուրդների եղբայրության:

Խսահակյանը մեծ Հայրենասեր է: Հայրենասիրական բուռն շնչով է համակված նրա

ողջ ստեղծագործությունը և հասարակական բովանդակ գործունեությունը: Անգամ նրա խորապես սիրային, լիրիկական երգերում կամ այն երգերում, որոնք նվիրված են բնության նկարագրությանը, զգացվում են Հայրենի երկրի շունչը, նրա գունեղությունը, համն ու հոտը: Հայրենի երկրի, հայրենի օջախի կարոտը նա խորապես զգացել է միշտ, աշխարհի բոլոր ծայրերում, ո՛վ ել որ եղել է: Որքա՞ն ուժեղ է հնչում բանաստեղծի սեր զեպի Հայրենիքը նրա հետեւյալ տողերում՝

«Փիտի փարվեմ շբեադ յանջիդ՝  
Գարեան վարդով ցնծո՞ւմ.  
Եկ մայրական անենուն շնչիդ՝  
Ցորեն արտով ծրվո՞ւմ:

Վա՞ն ու հզո՞ւ քո ապազան  
Կայծակում է իմ դեմ.  
Դո՞ւ, հավերժող իմ Հայաստան,  
Անուն քա՞նցր ու վսե՞մ»:


Իր տաղանդի ողջ զորությամբ Ավետիք Խսահակյանը երգել է մարդուն, թափանցել նրա հոգեկան աշխարհի ծալքերը, արտահայտել մարդկային վիշտը, նրա ճակատագիրը, փորձել է որոշել մարդու տեղը կյանքում: Իր այդ որոնումների մեջ բանաստեղծը շատ է զեգերել, երբեմն հիասթափվել մարդուց, կյանքից, հիասթափվել մարդկային առափնությունների նկատմամբ, բայց և այնպես միշտ մնացել է հումանիստ, մեծ մարդասեր: Իր հոռետեսական մտորումների ամենածանր պահին անգամ նա գրել է՝

Ատելու շափ սիրի՛ր մարդկանց, բայց  
լավություն միշտ արա:

Մարդը միշտ եղել է մեծ բանաստեղծի մտորումների առարկան: Նա կամեցել է մարդու մեջ տեսնել միայն ազնիվ, առաքինի գծեր և, ընդհակառակը, վշտացել է երբ

շի գտել ալդպիսի հաստկանիշները: Վշտանաւով հանդերձ, նա չի ասթափվել է, հեռացել անապատները, մենության մեջ որոնել իր վշտի ամուգումը: Մակայն խորապես մարդասիրական նրա հոգին շի կարողացել տանել ավազուտների անձկությունը և բանաստեղծը կրկին վերադարձել է իր սիրած մար-

կունդով նվիրվեց վերածնված Հայրենի երկրի վերաշինության գործին: Իր փալլում գրչի հետ միասին, նա Հայրենիքին նվիրաբերեց իր տակավին կենսունակ ուժերը, երկարամյա կյանքի փորձը, բազմակողմանի գիտելիքները: Այդ պահից սկսած ծավալվում է նրա հասարակական բեղմնավոր գոր-



Վարպետը աշխատասեղանի առջև

դու մոտ՝ այլ կերպ որոնելու և գտնելու իրեն զրավեցնող հարցերի պատասխանը:

Եվ սովորական իրավակարգը վճռականորեն օգնել է բանաստեղծ-մատածողին գտնելու մարդկային ճակատագրի հետ կապված շատ հարցերի պատասխանը:

...Քսան տարի առաջ ընդմիշտ վերադառնալով Հայրենիք, Ավետիք հսահակյանը ողջ

ծունեության շրջանը: Սիրելի Վարպետը ամենագործոն մասնակցություն է ցույց տալիս հայ գրականության և արվեստի հետազա զարգացման հետ կապված ամեն տեսակի հարցերի լուծմանը: Նա սերտորեն կապված է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, հասարակական մի շարք կազմակերպությունների հետ, 15 տարուց ի վեր

վարում է Հայաստանի Պրոլետարի միության վարչության նախագահի պաշտոնը, նա խաղաղության համար մղվող պալքարի ամենաակտիվ մասնակիցներից է:

Ավետիք Խսահակյանը սերտորեն կապված է Ս. էջմիածնի հետ: Նա Մայր Աթոռի լավագույն բարեկամներից է՝ պատրաստ իր ջանքերը՝ նվիրելու նրա ծաղկման համար: Ավետիք Խսահակյանը պատգամավոր է եղել 1945 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի: Կերպին տասը տարում Վարպետը ամենագործոն և սիրալիր մասնակցություն է ունեցել Գերագույն Հոգևոր Խորհրդի աշխատանքներում: Նա 1955 թվականի Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավոր էր ընտրված Բաքվի թեմից և պատգամավորական լիազորություն ուներ Կոստանդնուպոլսի Պատրիարքարանից: Ազգային-եկեղեցական ժողովը բարձր գնահատելով հայ ժողովրդի մեծանուն զավակի մատուցած ծառայությունները Ս. էջմիածնին, նրան ընտրեց Գերագույն Հոգևոր Խորհրդի պատվավոր անդամ:

\*\*\*

Ավետիք Խսահակյանի ծննդյան 80-ամյա հորելյանը վերածվեց իսկական համաժողովրդական տոնի: Հայաստանի քաղաքներում, շրջանային կենտրոններում, ուսումնական բարձրագույն հաստատություններում աեղի ունեցան հանդիսավոր երեկոներ, գիտական սեսիաներ, գրական երեկոներ:

Հոկտեմբերի 29-ին Երևանում, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում այդ նշանակալից տարեթվի առթիվ տեղի ունեցավ Հորելյանական հանդիսավոր երեկո: Հայ մեծանուն բանաստեղծին իրենց հարգանքը մատուցելու համար եկել էին գրողներ, գիտության գործիչներ, արվեստագետներ, Սովետական Միության եղբայրական ուսապուրիկաների գրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև մեծ թվով հասարակություն:

Նախագահության սեղանի մոտ տեղ էին գրավել Սովետական Հայաստանի կառավարության անդամներ՝ Ս. Թովմասյան, Հ. Մարգարյան, Բ. Մարտիրոսյան, Ա. Շահինյան, ակադ. Վ. Համբարձումյան և ուրիշները:

Հորելյանական հանդեսին ներկա էր նորին Ս. Օծություն Տ. Տ. Վաղաբենը. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի համար տեղ էր հատկացված թատրոնի պատվո օթյակում: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գուլում-

ճյանը, գերաշնորհ Տ. Մահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, հոգեցնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Մտեփանյանը:

Ներածական ընդարձակ խոսքով հանդիսավոր երեկոն բացեց կառավարական հորելյանական հանձնաժողովի նախագահ գրականագետ էր. Թոփշյանը:

«Սովետական Հայաստանո օրաթերթի խըմբագիր Հովհաննես Բաղդասարյանը ներկա եղողների բուռն ծափահարությունների ներքո, կարդաց Սովետական Հայաստանի Կոմունիստական պարտիայի կենտրոնական Կոմիտեի, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի ողջույնը՝ ուղղված Ալեքսակյանին:

ՍՍՌՄ Գրողների միության վարչության անոնքից հորելյանական գերմորեն ողջունեց ուստի նշանավոր բանաստեղծ-առակագիր Ս. Միակովը:

Մեծանուն բանաստեղծին իրենց ողջունի խոսքն ասացին՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից՝ Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը, Հայաստանի Գրողների միության կողմից՝ բանաստեղծ Գ. Սարյանը, Վրաստանի Գրողների միության կողմից՝ դրամատորդ Շ. Դադիանին, Ուկրաինայի Գրողների միության կողմից՝ Ի. Նեխոպոդան, Ազգբեկանի Գրողների միության կողմից՝ Օ. Սարիվելին, Հայկական ՍՍՌ Կուտուզայի մինիստրության կողմից՝ Ա. Շահինյանը և ուրիշներ:

Հորելյարի հասցեով ստացված էին մեծ թվով ողջունի հեռագերի, որոնց թվում Ս. Միկոյանից, Սովետական Միության մարշալ Ի. Բաղրամյանից, Ազգմիրալ Ի. Խակովից, ակադեմիկոսներ Լ. Օքբելուց, Զ. Օքբելուց, Ե. Հասրաթյանից, ինչպես նաև Մովկայի, Լենինգրադի, Կիևի, Թրիլիսիի, Բաքվի, Մինսկի, Ռիգայի և Սովետական Միության այլ վայրերի գրական ու հասարակական կազմակերպություններից:

\*\*\*

Սովետական Միության Գերագույն Սովետի նախագահության 1955 թվականի հոկտեմբերի 29-ի Հրամանագրով, գեղարվետական գրականության բնագավառում մատուցած աշքի ընկնող ծառայությունների համար, ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Ավետիք Խսահակյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

